Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 10

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Նպատակը

1. Սույն ստանդարտի նպատակն է սահմանել՝

   ա) երբ պետք է կազմակերպությունը ճշգրտի իր ֆինանսական հաշվետվությունները՝ կապված հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերի հետ.

   բ) բացահայտումները, որոնք կազմակերպությունը պետք է կատարի ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար վավերացման ամսաթվի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ:

   Ստանդարտը նաև պահանջում է, որ կազմակերպությունն իր ֆինանսական հաշվետվությունները չպատրաստի անընդհատության հիմունքով, եթե հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերը ցույց են տալիս, որ անընդհատության ենթադրությունը տեղին չէ:

Գործողության ոլորտը

2. Սույն ստանդարտը պետք է կիրառվի հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերը հաշվառելիս և բացահայտելիս:

Սահմանումներ

3. Ստորև բերված տերմինները սույն ստանդարտում օգտագործվում են հետևյալ իմաստներով՝

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր՝ **և բարենպաստ, և ոչ բարենպաստ դեպքեր, որոնք տեղի են ունենում հաշվետու ժամանակաշրջանի վերջի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները վավերացվում են հրապարակման համար: Տարբերակվում է դեպքերի երկու տեսակ՝**

ա) դեպքեր, որոնք տրամադրում են վկայություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանների վերաբերյալ (*հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքեր*).

բ) դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանից հետո առաջացած պայմանները (*հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքեր*):

4. Ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար վավերացման գործընթացը կարող է տարբերվել՝ կախված կառավարման կառուցվածքից, օրենսդրությամբ սահմանված պահանջներից, ինչպես նաև այն ընթացակարգերից, որոնց հետևում են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ավարտելիս:

5. Որոշ դեպքերում, կազմակերպությունից պահանջվում է ֆինանսական հաշվետվությունները իր բաժնետերերի հաստատմանը ներկայացնել ֆինանսական հաշվետվությունների հրապարակումից հետո: Նման դեպքերում, ֆինանսական հաշվետվությունները վավերացված են համարվում հրապարակման ամսաթվի դրությամբ, այլ ոչ թե ֆինանսական հաշվետվությունները բաժնետերերի կողմից հաստատելու ամսաթվի դրությամբ:

Օրինակ

Կազմակերպության ղեկավարությունը 20X1թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների նախագծի կազմումն ավարտում է 20X2թ. փետրվարի 28-ին: 20X2թ. մարտի 18-ին տնօրենների խորհուրդը ուսումնասիրում է ֆինանսական հաշվետվությունները և դրանք վավերացնում է հրապարակման համար: 20X2թ. մարտի 19-ին կազմակերպությունը հայտարարում է իր շահույթի և այլ ընտրված ֆինանսական տեղեկատվության մասին: Ֆինանսական հաշվետվությունները բաժնետերերին և այլոց մատչելի են դառնում 20X2թ. ապրիլի 1-ին: Բաժնետերերը 20X2թ. մայիսի 15-ին իրենց տարեկան ժողովում հաստատում են ֆինանսական հաշվետվությունները, և հաստատված ֆինանսական հաշվետվությունները 20X2թ. մայիսի 17-ին հանձնվում են կարգավորող մարմնին:
Ֆինանսական հաշվետվությունները հրապարակման համար վավերացված են 20X2թ. մարտի 18-ին (տնօրենների խորհրդի կողմից հրապարակման համար վավերացման ամսաթիվը):

6. Որոշ դեպքերում, կազմակերպության ղեկավարությունից պահանջվում է իր ֆինանսական հաշվետվությունները հաստատման ներկայացնել խորհրդին (բաղկացած բացառապես գործադիր մարմնում չներգրավված անձանցից): Նման դեպքերում, ֆինանսական հաշվետվությունները համարվում են հրապարակման համար վավերացված, երբ ղեկավարությունը դրանք վավերացնում է՝ խորհրդին ներկայացնելու համար:

Օրինակ

20X2թ. մարտի 18-ին կազմակերպության ղեկավարությունը վավերացնում է ֆինանսական հաշվետվությունները՝ խորհրդին ներկայացնելու համար: Խորհուրդը բաղկացած է բացառապես գործադիր մարմնում չներգրավված անձանցից և կարող է ներառել աշխատակիցների ներկայացուցիչներ և այլ արտաքին շահագրգիռ կողմեր: Խորհուրդը ֆինանսական հաշվետվությունները հաստատում է 20X2թ. մարտի 26-ին: Ֆինանսական հաշվետվությունները բաժնետերերին և այլոց մատչելի են դառնում 20X2 թ. ապրիլի 1-ին: Բաժնետերերը 20X2թ. մայիսի 15-ին իրենց տարեկան ժողովում հաստատում են ֆինանսական հաշվետվությունները, և հաստատված ֆինանսական հաշվետվությունները 20X2թ. մայիսի 17-ին հանձնվում են կարգավորող մարմնին:
Ֆինանսական հաշվետվությունները հրապարակման համար վավերացված են 20X2թ. մարտի 18-ին (ղեկավարության կողմից վերահսկիչ խորհրդին ներկայացնելու համար վավերացման ամսաթիվը):

7. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերը ներառում են մինչև ֆինանսական հաշվետվությունները հրապարակման համար վավերացնելու ամսաթիվը տեղի ունեցած բոլոր դեպքերը, նույնիսկ եթե այդ դեպքերը տեղի են ունեցել շահույթի կամ այլ ընտրված ֆինանսական տեղեկատվության մասին հրապարակավ հայտարարելուց հետո:

Ճանաչում և չափում

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքեր

8. Կազմակերպությունը պետք է ճշգրտի իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

9. Ստորև բերված են հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերի օրինակներ, որոնք պահանջում են, որ կազմակերպությունը ճշգրտի իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները կամ ճանաչի նախկինում չճանաչված հոդվածները՝

ա) հաշվետու ամսաթվից հետո կայացված դատարանի վճիռը, որը հավաստում է, որ կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուներ ներկա պարտականություն: Կազմակերպությունը ճշգրտում է նշված դատարանի վճռին վերաբերող արդեն ճանաչված ցանկացած պահուստ՝ *«Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ»* ՀՀՄՍ 37-ի համաձայն, կամ ճանաչում է նոր պահուստ: Կազմակերպությունը չպետք է պարզապես բացահայտի պայմանական պարտավորությունը, քանի որ այդ վճիռը տրամադրում է լրացուցիչ վկայություն, որը պետք է դիտարկվի ՀՀՄՍ 37-ի 16-րդ պարագրաֆի համաձայն.

բ) հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղեկատվության ստացումը, որը վկայում է, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվը արժեզրկված էր, կամ, որ այդ ակտիվի համար նախկինում ճանաչված արժեզրկումից կորստի գումարը ճշգրտման կարիք ունի: Օրինակ՝

(i) հաճախորդի սնանկացումը, որը տեղի է ունենում հաշվետու ժամանակաշրջանից հետո, սովորաբար հաստատում է, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով կորուստն առկա էր, և կազմակերպությունը կարիք ունի ճշգրտելու առևտրական դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը, և

(ii) հաշվետու ժամանակաշրջանից հետո պաշարների վաճառքը կարող է վկայել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրանց իրացման զուտ արժեքի մասին.

գ) հաշվետու ժամանակաշրջանից հետո մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջը ձեռք բերված ակտիվների ինքնարժեքի կամ ակտիվների վաճառքից հասույթների որոշումը.

դ) հաշվետու ժամանակաշրջանից հետո շահույթի բաշխումների կամ պարգևավճարների գումարի որոշումը, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուներ նման վճարումներ կատարելու իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես արդյունք մինչև այդ ամսաթիվը տեղի ունեցած դեպքերի (տե՛ս *«Աշխատակիցների հատուցումներ»* ՀՀՄՍ 19-ը).

ե) կեղծիքների կամ սխալների հայտնաբերումը, որոնք ցույց են տալիս, որ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ չեն:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքեր

10. Կազմակերպությունը չպետք է ճշգրտի իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

11. Հաշվետու ժամանակաշրջանից հետո չճշգրտող դեպքի օրինակ է ներդրումների իրական արժեքի նվազումը հաշվետու ժամանակաշրջանի վերջի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները վավերացվում են հրապարակման համար: Իրական արժեքի նվազումը սովորաբար կապված չէ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներդրումների վիճակի հետ, այլ արտացոլում է այն հանգամանքները, որոնք առաջացել են հետագայում: Հետևաբար, կազմակերպությունն իր ֆինանսական հաշվետվություններում չի ճշգրտում այդ ներդրումների գծով

ճանաչված գումարները: Նմանապես, կազմակերպությունը չի արդիականացնում հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ այդ ներդրումների գծով բացահայտված գումարները՝ չնայած կարող է անհրաժեշտ լինել ներկայացնել լրացուցիչ բացահայտումներ՝ համաձայն 21-րդ պարագրաֆի:

Շահաբաժիններ

12. Եթե կազմակերպությունը բաժնային գործիքներ տիրապետողներին շահաբաժիններ է հայտարարում (ինչպես սահմանված է «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» ՀՀՄՍ 32-ում) հաշվետու ժամանակաշրջանից հետո, ապա կազմակերպությունը չպետք է ճանաչի այդ շահաբաժինները որպես պարտավորություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

13. Եթե շահաբաժինները հայտարարվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո, սակայն մինչև ֆինանսական հաշվետվությունները հրապարակման համար վավերացնելը, շահաբաժինները չեն ճանաչվում որպես պարտավորություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, քանի որ այդ ժամանակ պարտականությունն առկա չէ: Նման շահաբաժինները բացահայտվում են ծանոթագրություններում՝ *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ՀՀՄՍ 1-ի համաձայն:

Անընդհատություն

14. Կազմակերպությունը չպետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվություններն անընդհատության հիմունքով, եթե ղեկավարությունը հաշվետու ժամանակաշրջանից հետո որոշում է, որ առկա է կա՛մ կազմակերպությունը լուծարելու, կա՛մ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ էլ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

15. Հաշվետու ժամանակաշրջանից հետո գործունեության արդյունքների և ֆինանսական վիճակի վատթարացումը կարող է վկայել անընդհատության ենթադրության կիրառման՝ դեռևս տեղին լինելու հարցի դիտարկման անհրաժեշտության մասին: Եթե անընդհատության ենթադրությունն այլևս կիրառելի չէ, ապա դրա ազդեցությունն այնքան նշանակալի է, որ սույն ստանդարտը պահանջում է արմատական փոփոխություն հաշվապահական հաշվառման հիմունքներում, այլ ոչ թե սոսկ հաշվապահական հաշվառման սկզբնապես կիրառված հիմունքների համաձայն ճանաչված գումարների ճշգրտում:

16. ՀՀՄՍ 1-ը սահմանում է պահանջվող բացահայտումներ, եթե՝

ա) ֆինանսական հաշվետվությունները չեն պատրաստվում անընդհատության հիմունքով, կամ

բ) ղեկավարությունը տեղյակ է էական անորոշություններին՝ կապված այն դեպքերի կամ իրադարձությունների հետ, որոնք կարող են նշանակալի կասկածներ հարուցել կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Բացահայտում պահանջող դեպքերը կամ իրադարձությունները կարող են առաջանալ հաշվետու ժամանակաշրջանից հետո:

Բացահայտում

Հրապարակման համար վավերացման ամսաթիվ

17. Կազմակերպությունը պետք է բացահայտի ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար վավերացման ամսաթիվը և, թե ում կողմից են դրանք վավերացվել: Եթե կազմակերպության սեփականատերերը կամ այլոք իրավասու են ֆինանսական հաշվետվությունները փոփոխել հրապարակելուց հետո, կազմակերպությունը պետք է բացահայտի այդ փաստը:

18. Օգտագործողների համար կարևոր է իմանալ, թե երբ են ֆինանսական հաշվետվությունները վավերացվել հրապարակման համար, քանի որ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում այդ ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերը:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանների բացահայտման արդիականացում

19. Եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղեկատվություն է ստանում այն պայմանների մասին, որոնք առկա էին հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ապա պետք է արդիականացնի այդ պայմաններին վերաբերող բացահայտումները՝ հաշվի առնելով նոր տեղեկատվությունը:

20. Որոշ դեպքերում, կազմակերպությունը կարիք ունի արդիականացնելու իր ֆինանսական հաշվետվություններում կատարված բացահայտումները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո ստացված տեղեկատվությունն արտացոլելու նպատակով, նույնիսկ եթե այդ տեղեկատվությունը չի ազդում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Բացահայտման արդիականացման անհրաժեշտության օրինակ է, երբ հաշվետու ժամանակաշրջանից հետո հայտնի է դառնում պայմանական պարտավորության փաստը, որն առկա էր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ի լրումն այն դիտարկման, թե արդյոք կազմակերպությունը ՀՀՄՍ 37-ի համաձայն պետք է ճանաչի կամ փոփոխի պահուստը, կազմակերպությունն արդիականացնում է պայմանական պարտավորությունների վերաբերյալ իր բացահայտումները՝ հաշվի առնելով այդ փաստը:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքեր

21. Եթե հաշվետու ժամանակաշրջանից հետո չճշգրտող դեպքերն էական են, դրանց չբացահայտումը կարող է ազդել ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կայացրած տնտեսական որոշումների վրա: Հետևաբար, կազմակերպությունը պետք է հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքի յուրաքանչյուր էական դասի մասին բացահայտի հետևյալը՝

ա) դեպքի բնույթը, և

բ) դրա ֆինանսական հետևանքի գնահատումը կամ այդպիսի գնահատում կատարելու անհնարինության մասին հայտարարությունը:

22. Ստորև բերվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքերի օրինակներ, որոնք սովորաբար պետք է բացահայտվեն՝

ա) հաշվետու ժամանակաշրջանից հետո խոշոր բիզնեսի միավորում (*«Բիզնեսի միավորումներ»* ՖՀՄՍ 3-ը նման դեպքերում պահանջում է հատուկ բացահայտումներ) կամ խոշոր դուստր կազմակերպության օտարում.

բ) գործառնության ընդհատման մտադրության մասին հայտարարում.

գ) ակտիվների խոշոր գնումներ, ակտիվների դասակարգում որպես վաճառքի համար պահվող՝ համաձայն *«Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ»* ՖՀՄՍ 5-ի, ակտիվների այլ օտարումներ, կամ պետության կողմից խոշոր ակտիվների բռնագրավում.

դ) հաշվետու ժամանակաշրջանից հետո հրդեհի պատճառով խոշոր արտադրական հզորությունների ոչնչացում.

ե) խոշոր վերակազմավորում սկսելը կամ դրա մասին հայտարարելը (տե՛ս ՀՀՄՍ 37).

զ) հաշվետու ժամանակաշրջանից հետո սովորական բաժնետոմսերով և պոտենցիալ սովորական բաժնետոմսերով խոշոր գործարքներ (*«Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ»* ՀՀՄՍ 33-ը պահանջում է, որ կազմակերպությունը բացահայտի նման գործարքների նկարագրությունը, բացառությամբ, երբ նման գործարքները ներառում են կապիտալացման կամ բոնուսային թողարկումներ, բաժնետոմսերի բաժանումներ կամ բաժնետոմսերի միավորումներ, որոնք բոլորն էլ ենթակա են ճշգրտման՝ համաձայն ՀՀՄՍ 33-ի).

է) հաշվետու ժամանակաշրջանից հետո ակտիվների գների կամ արտարժույթի փոխարժեքների անսովոր խոշոր փոփոխություններ.

ը) հաշվետու ժամանակաշրջանից հետո հայտարարված կամ ուժի մեջ մտած հարկային օրենքների կամ հարկի դրույքաչափերի փոփոխություններ, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ընթացիկ և հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների վրա (տե՛ս *«Շահութահարկեր»* ՀՀՄՍ 12-ը).

թ) նշանակալի հանձնառությունների կամ պայմանական պարտավորությունների ստանձնում, օրինակ՝ նշանակալի երաշխիքների տրամադրում.

ժ) խոշոր դատական գործընթացի սկիզբը, որն առաջանում է հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերի հետևանքով:

Ուժի մեջ մտնելը

23. Կազմակերպությունը պետք է սույն ստանդարտը կիրառի 2005 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ստանդարտի ավելի վաղ կիրառումը խրախուսվում է: Եթե կազմակերպությունը սույն ստանդարտը կիրառում է մինչև 2005 թվականի հունվարի 1-ը սկսվող ժամանակաշրջանի համար, ապա այդ փաստը պետք է բացահայտվի:

23Ա. 2011 թվականի մայիսին հրապարակված «*Իրական արժեքի չափում*» ՖՀՄՍ 13-ով փոփոխվել է պարագրաֆ 11-ը: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունը, երբ կիրառում է ՖՀՄՍ 13-ը:

23Բ. 2014 թվականի հուլիսին հրապարակված *«Ֆինանսական գործիքներ»* ՖՀՄՍ 9-ով փոփոխվել է պարագրաֆ 9-ը: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունը, երբ կիրառում է ՖՀՄՍ 9-ը:

ՀՀՄՍ 10-ի (1999 թվականին վերանայված տարբերակ) գործողության դադարեցումը

24. Սույն ստանդարտը փոխարինում է *«Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր»* ՀՀՄՍ 10-ին (1999 թվականին վերանայված տարբերակ):